ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

2019թ. փետրվարի 3-ը

ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Հուշարձանը նախատեսվում է իրականացնել հարթաքանդակի ձևաչափով, որը տեղադրվելու է Զաքյան, Բեյրութի և Գրիգոր Լուսավորիչ փողոցներով պարփակված Մանկական այգու՝ Գրիգոր Լուսավորիչ փողոցից դեպի Զաքիան փողոց ձգվող ցանկապատի 22-23-րդ հենապատերի միջնամասում (համաձայն կից ներկայացված հատակագիծ-սխեմայի),

- Հուշարձանի գաղափարական հորինվածքը սահմանափակվելու է նշմարվող մարմինների ուրվագծերի համադրությամբ՝ բացառելով դիմանկարային նմանությունները,

- Հարթաքանդակը տեղադրվելու է բազալտե կրող հարթակի վրա, որը կարող է տարածվել դեպի այգու տարածքը ոչ ավելի, քան 120 սմ,

- Կրող հարթակի վերնամասում փորագրվելու է հուշարձանի անվանումը. «2008թ. մարտի 1-ի զոհերի հիշատակին»,

- Հուշարձանի գաղափարական հորինվածքից ելնելով ցանկապատի 22-23-րդ հենապատերի ապամոնտաժումը նախատեսելու պարագայում անհրաժեշտ է ներկայացնել կրող հարթակի միացումը ցանկապատի հետ,

- Հուշարձանը ճարտարապետական և գեղագիտական տեսանկյուններից պետք է ներդաշնակ և համահունչ լինի տվյալ միջավայրին, տարածության մեջ մասշտաբի առումով նպաստի ամբողջական ընկալմանը և չխաթարի հետիոտնի անարգել շարժմանը:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ

- Տարածքի գլխավոր հատակագիծը,

- Ճարտարապետական փռվածքները Մ 1:50,

- Հուշարձանի կտրվածքը Մ 1:50,

- Գունավոր գծագրերը 3D ձևաչափով, այդ թվում՝ գիշերային լուսավորության առաջարկ,

- Բացատրագիրը /2 օրինակ/,

- Անհրաժեշտության դեպքում կարելի է ներկայացնել առաջարկը պարզաբանող լրացուցիչ նյութեր, ներառյալ՝ մանրակերտը:

Բոլոր նյութերը ներկայացնել 60սմ x 80սմ ձևաչափով

ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Հանձնաժողովի կողմից լավագույնը ճանաչված գործի հեղինակը պարգևատրվում է 2 մլն դրամով, և գործն իրականացվում է:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մրցութային առաջակությունները ներկայացվում են 2020թ. փետրվարի 24-ին հետևյալ հասցեով. Արգիշտի փողոց 1, Երեւան: Հեռախոս՝ 011 514 158:

Գծագրերի աջ կողմում, վերևի անկյունում վեցանիշ թվով նշվում է նախագծի ծածկագիրը՝ շրիֆտի բարձրությունը 15 մմ:

Գործը ներկայացնելիս փակ ծրարի մեջ համապատասխան ծածկագրով ներկայացվում է հեղինակի անունը (հեղինակային կազմը և մասնակցության տոկոսը):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մանրամասների համար այցելեք Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքը